

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ինչու՞ է հարկավոր  
հաշմանդամություն ունեցող  
կանանց առողջության մասին  
գիրքը**



ԵՐԿՐԵ ՆՔՆ ԾՈՒԿՏՈՒԿՈՂ 7 ՍՈՒՈՒԷ ՍԴՍ

Հաշմանդամություն ունեցող կանանց անհրաժեշտ է ամուր առողջություն: Առողջությունն ավելին է, քան պարզապես հիվանդության բացակայությունը: Լինել առողջ՝ նշանակում է ունենալ առողջ մարմին, միտք և հոգի:

Հաշմանդամություն ունեցող կանայք անձամբ կարող են զբաղվել իրենց առողջական խնդիրներով, եթե բավականաչափ տեղեկացված լինեն: Այդպիսի տեղեկացվածությունը կօգնի նաև փոխել մարդկանց վերաբերմունքը հաշմանդամության նկատմամբ: Կինը, ով կարողանում է ինքնուրույն տնօրինել իր կյանքը, արժանանում է շրջապատի հարգանքին ու աջակցությանը:

Թեև հաշմանդամությունը միշտ չէ, որ առողջական խնդիր է, բայց հաճախ հաշմանդամություն ունեցող կանայք, ցավոք, ժամանակին չեն արժանանում անհրաժեշտ ուշադրության: Իսկ եթե նրանց փոքր առողջական խնդիրը ժամանակին չվերացվի, այն կարող է վերածվել կյանքին սպառնացող վտանգի:

Մենք պետք է վերացնենք այն պատնեշները, որոնք թույլ չեն տալիս կնոջն օգտվել իր առողջությունը պահպանելու կամ վերականգնելու իրավունքից:

**Խոչընդոտներ առողջությունը պահպանելու և վերականգնելու ճանապարհին**

Իմ երկրում հաշմանդամները և, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող կանայք, դիտարկվում են որպես երեխաներ, որոնց ոչ մի պատասխանատվություն չի վստահվում: Նրանք զրկված են գրեթե ամեն ինչից՝ կրթություն, առողջապահություն, սեփականատիրություն և այլն:

Հաշմանդամություն ունեցող կանայք պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես կարող են հոգ տանել իրենց առողջության մասին և ինչ կարող են անել որպես խումբ՝ փոխելու բուժաշխատողների վերաբերմունքը, որպեսզի առողջապահությունն ավելի մատչելի ու հասանելի դառնա նրանց համար:



*Լիզի Լոնգշու  
Հաշմանդամություն ունեցողների  
ազգային խորհուրդ,  
Չինքապե*

ՄԱՌՈՂՋ ԼԻՆԵՆՈՒ ԻՄ ԻՐԱՎԱՊՈՒՆԵՐ

Հաշմանդամություն ունեցող շատ կանանց համար դժվար է ստանալ համապատասխան բժշկական հոգածություն, երբ ունեն դրա կարիքը:

Եթե նույնիսկ կինն ապրում է առողջապահական կենտրոնին մոտ և ունի բավականաչափ գումար՝ վճարելու այդ ծառայությունների համար, շատ կլինիկաներ, առողջապահական կենտրոններ և հիվանդանոցներ չեն կարող բավարարել հասարակության բոլոր անդամների կարիքները: Այսպես, օրինակ, նրանց համար խոչընդոտ է անվասայլակների համար նախատեսված թերապիաների բացակայությունը, բռայյան այբուբենով կամ համապատասխան սկավառակներով տեղեկատվության անհասանելիությունը՝ տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար: Չկան ժեստերի լեզվին տիրապետող մասնագետներ՝ խուլ և թույլ լսողությամբ կանանց հետ հաղորդակցումը հնարավոր դարձնելու համար, ինչպես նաև համապատասխան պատրաստվածությամբ մարդիկ, որոնք կկարողանան օգնել մտավոր թույլ զարգացում ունեցող կանանց:

Մեկ այլ խնդիր է այն, որ բժիշկները և առողջապահության ոլորտի աշխատողները սովորաբար չունեն համապատասխան պատրաստվածություն՝ հաշմանդամություն ունեցող կանանց առողջական խնդիրներն ու կարիքները հասկանալու համար: Բուժաշխատողների թյուր պատկերացումները հաշմանդամության վերաբերյալ կարող են անհարմարություն ու դժվարություն ստեղծել հաշմանդամություն ունեցող կանանց համար՝ համապատասխան բուժօգնություն ստանալու գործընթացում:

Երբ հաշմանդամություն ունեցող կինը չունի կրթության և այլ իրավունքներից օգտվելու հնարավորություն, նա դառնում է ավելի խոցելի, ենթակա՝ աղքատության ու շահագործման: Իր իրավունքների չիմացությունն ու ինքնավստահության բացակայությունը նպաստում են նրա՝ հասարակությունից մեկուսացմանը:


**Ու՞մ համար է նախատեսված այս գիրքը**

Այս գիրքը գրված է աշխարհում ապրող հաշմանդամություն ունեցող միլիոնավոր կանանց համար, որոնք տառապում և մահանում են այն պատճառով, որ չեն ստանում համապատասխան պատշաճ բուժսպասարկում: Այն կարող է օգնել բազմաթիվ կանանց՝ ավելի լավ հոգ տանելու իրենց առողջության մասին, զարգացնելու ունակություններն ու հնարավորությունները և ավելի արդյունավետ մասնակցություն ունենալու հասարակական կյանքին:

Սույն գիրքը վերականգնողական առողջության մասին ձեռնարկ չէ և չի տալիս ամբողջական տեղեկատվություն տարբեր հիվանդությունների, հաշմանդամության ախտորոշման ու բուժման մասին: Գիրքն ունի այլ նպատակներ:

- Նրանում պարունակվող տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող կանանց կօգնի ավելի լավ խնամք ստանալ:
- Գիրքը կօգնի առողջապահության ոլորտում աշխատողներին, ինչպես նաև ընտանիքի անդամներին և նրանց խնամքով զբաղվող անձանց, հասկանալու, որ հաշմանդամությունը հիվանդություն չէ, սակայն հաշմանդամություն ունեցող կինը՝ կույր կամ սայլակի օգնությամբ տեղաշարժվող, ինչպես յուրաքանչյուր կին, կարող է հիվանդանալ այնպիսի հիվանդություններով, ինչպիսիք են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը կամ մալարիան:
- Գիրքը կաջակցի ընտանիքներին, ընկերներին, առողջապահության աշխատակիցներին և այն մարդկանց, ովքեր զբաղվում են հաշմանդամություն ունեցող կանանց խնամքով, համագործակցված իրականացնել այդ աշխատանքը:
- Գրքում խոսվում է նաև հաշմանդամության սոցիալական պատճառների մասին և առաջարկվում ուղիներ, որոնք կօգնեն փոխել ընտանիքներում ու հասարակության մեջ ձևավորված այն հայեցակարգն ու համոզմունքները, որոնք գործում են ի վնաս հաշմանդամություն ունեցող կանանց առողջության:
- Այն հնարավորինս օգտակար դարձնելու համար հաշմանդամություն ունեցող կանայք ամբողջ աշխարհից ներկայացրել են մեզ իրենց առողջական խնդիրները, տեսակետներն ու փորձը՝ նշելով այն հարցերը, որոնք կցանկանային արծարծված տեսնել գրքում: Նրանց ձայնը, փորձն ու պատմությունները զետեղված են գրքի յուրաքանչյուր էջում:

ԵՐԿՐԵ ՆԵՐ ՃՈՒՈՂՏՈՒՄ Ե ՍՈՒՆԱԿԱՆՆԵՐԻՆ



ԱՌՈՂՁ ԼԻՆԵՆՈՒ ԻՄ ԻՐԱՎՎՈՒՆԵՐ